

ՀՏԴ 336.7

**ՆԵՌՔԱՆԿԵՐԸ ԵՎ ՉԵԼԼԵՆՋԸՐ ԲԱՆԿԵՐԸ ՈՐՊԵՍ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՄԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ՀՀ-ՈՒՄ**

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայաստանի պեղական տնտեսագիտական համալսարան

Ֆինանսական ներգրավվածությունը գնալով մեծ կարևորություն է ստանում, քանի որ ապացուցվում է դրա կապը հասարակության բարեկեցության բարձրացման և երկրի տնտեսական աճի ապահովման հետ: ՀՀ-ում դրա մակարդակը վերջին տարիներին աճել է, սակայն դեռևս բնակչության կեսից ավելին չունի հաշիվ բանկում, ինչը հանդիսանում է ֆինանսական ներգրավվածության մակարդակի նվազագույն ցուցիչներից մեկը: Հոդվածում ներկայացվում է, թե համաշխարհային ֆինանսական շուկայում վերջին տասնամյակում ձևավորված բանկերի նոր տեսակները՝ նեոբանկերը և չելլենջոր բանկերը, ինչպես կարող են բարձրացնել ֆինանսական ներգրավվածության մակարդակը ՀՀ-ում:


Բանալի բառեր. ֆինանսական ներգրավվածություն, բանկային համակարգ, նեոբանկեր, չելլենջոր բանկեր, առցանց բանկինգ

Ֆինանսական համակարգին բնակչության ներգրավվածությունը (ֆինանսական ներգրավվածություն) կարևոր է երկրում աղքատության կրճատման և ներառական տնտեսական աճի հասնելու համար: Երբ մարդիկ ներգրավված են ֆինանսական համակարգում, կարողանում են ավելի արդյունավետ կառավարել իրենց գումարները, սկսել և ընդլայնել գործարարությունը, ներդրումներ կատարել կրթության մեջ, հաղթահարել ֆինանսական ցնցումները և այլն: Ըստ Համաշխարհային բանկի “The Global Findex Database” զեկույցի վերջին հրապարակման՝ ՀՀ-ում 2017 թ. չափահաս բնակչության 48 %-ը հաշիվներ է ունեցել տարբեր ֆինանսական հաստատություններում, 10 %-ը խնայել է իր միջոցները ֆինանսական կառույցներում և 29 %-ը վարկեր է վերցրել ֆինանսական հաստատություններից [1]: Չնայած այս բոլոր ցուցանիշների գծով 2017 թ.-ին գրանցվել է աճ 2011 թ. համեմատ, սակայն ՀՀ-ում չափահաս անձանց կեսից ավելին նույնիսկ չունի հաշիվ բանկում: Մեր կարծիքով՝ ֆինանսական ներգրավվածության բարձրացման համար հիմք կարող են հանդիսանալ վերջին տասնամյակում ֆինանսական աշխարհում ի հայտ եկած բանկային ոլորտի նոր «խաղացողները»՝ նեոբանկերը կամ չելլենջոր (challenger) բանկերը, որոնք կարող են ինչպես «ստեղծագործական ոչնչացման» (creative

destruction) հիմք հանդիսանալ և փոխել ավանդական բանկային համակարգը, այնպես էլ նպաստել ֆինանսական ներգրավվածության խորացմանն աշխարհում և ՀՀ-ում:

Ներբանկերի և չելլենջոր բանկերը ծագել են վերջին տասնամյակում Մեծ Բրիտանիայում, ինչն էլ ուներ իր պատճառները. բանկային ոլորտում մրցակցության պակասը և երկրում դիջիթալ բանկինգի առաջացումը դեռևս 1990-2000-ական թվականներին և դրա զարգացումը հետագայում: Սակայն այս բանկերը միայն անգլիական գործոն (ֆենոմեն) համարել չի կարելի: Այսօր ողջ աշխարհում գործում են 100-ից ավել ներբանկեր և չելլենջոր բանկեր (ԱՄՆ, Գերմանիա, Ավստրալիա, Չինաստան, Ռուսաստան, Հարավային Աֆրիկա, Բրազիլիա, Հնդկաստան և այլն):

Ներբանկերի և չելլենջոր բանկերի գլխավոր առանձնահատկությունն ամբողջովին թվային ձևաչափով բանկային ծառայությունների մատուցումն է. դրանք չունեն մասնաճյուղեր և իրենց հաճախորդների սպասարկումն իրականացնում են բացառապես մոբայլ հավելվածներով և համակարգչային հարթակներով: Շատ հաճախ դրանք կիրառում են մեքենայական ուսուցման ալգորիթմներ և արհեստական բանականություն՝ հաճախորդների կարիքների բացահայտման, վարկերի տրամադրման և այլնի համար: Ներբանկերի, չելլենջոր բանկերի, ավանդական բանկերի և թվային բանկինգի ծառայություն մատուցող բանկերի տարբերությունները պատկերված են **Գծապատկեր 1**-ում:



Գծապատկեր 1. Ներբանկերի և չելլենջոր բանկերի, ավանդական բանկերի և թվային բանկինգի ծառայություն մատուցող բանկերի տարբերությունները


Բանկային այս հեղափոխության հիմքը նոր ենթակառուցվածքն է, որի շնորհիվ այժմ համեմատաբար պարզ և հասանելի է ներբանկ ստեղծելը: Եթե ավանդական բանկի բացումը կարող է մի քանի տարի և միլիոնավոր դոլարներ պահանջել, ապա տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս նորաստեղծ ձեռնարկություններին անմիջապես միանալ ավանդական ֆինանսական հաստատություններին և սկսել կանոնադրական կապիտալ ընդամենը 500 000 ԱՄՆ դոլարով [2]:

Ներբանկերը և չելլենջոր բանկերը հաճախ նույնացվում են՝ որպես ամբողջովին թվային բանկեր, սակայն դրանք ունեն 2 կարևոր տարբերակիչ առանձնահատկություն.

- Ներբանկերը չունեն բանկային արտոնագիր և ապավինում են գործընկեր-բանկի հետ համագործակցությանը, իսկ չելլենջոր բանկերն ունեն բանկային գործառությունների ամբողջական համալիր իրականացնելու արտոնագիր,

- Ներբանկերը սովորաբար կենտրոնանում են հաճախորդների որոշակի հատվածի (օրինակ՝ ՓՄՁ-ների, երիտասարդների, ֆերմերների և այլն) վրա, իսկ չելլենջոր բանկերը ծածկում են բանկային գործառությունների ամբողջ շրջանակը:

Համաշխարհային կանխատեսումները դրանց վերաբերյալ դրական են (տե՛ս **Գծապատկեր 1**): Ըստ CB Insights-ի գնահատականների՝ միայն 2019 -ի առաջին 9 ամիսների ընթացքում վենչուրային ֆոնդերի ներդրողները 2.9 միլիարդ դոլար են ներդրել ներբանկերում, իսկ ամբողջ 2018-ին ներդրումները կազմել են 2.3 միլիարդ դոլար: Ըստ csg42 խորհրդատվական ընկերության վերջին զեկույցի՝ կանխատեսվում է, որ ԱՄՆ 10 խոշորագույն բանկերը տարվա ընթացքում կկորցնեն 159 միլիարդ դոլարի ավանդներ՝ ավելի փոքր մրցակիցների պատճառով:



Գծապատկեր 2. Ներբանկերի և չելլենջոր բանկերի համախառն տարեկան կանխատեսվող աճի տեմպերն աշխարհում (ըստ Variant Market Research-ի) [3]

Ներբանկերի և չելլենջըր բանկերի ազդեցությունը ֆինանսական ներգրավվածության վրա հասկանալու համար անհրաժեշտ է վերլուծել այն երեք դիտանկյունից.

1. Ներբանկերի և չելլենջըր բանկերի ազդեցությունը ֆինանսական ծառայությունների և գործիքների հասանելիության վրա (օրինակ՝ գյուղական վայրերում բանկերի մասնաճյուղերի առկայությունը, ֆինանսական ծառայությունների գները և այլն):

• *Ներբանկերի և չելլենջըր բանկերը կարող են առաջարկել բանկային պրոդուկտներ՝ ավելի ցածր գներով:* Ըստ Համաշխարհային բանկի անցկացրած հետազոտության՝ հարցվողների մոտ մեկ քառորդը բանկային հաշիվ չունենալու պատճառ է նշում դրա հետ կապված բարձր ծախսերը [4]: Ներբանկերի և չելլենջըր բանկերի դեպքում հնարավոր է ապահովել ավելի մատչելի պայմաններ հաճախորդների համար. եթե ավանդական բանկերի դեպքում մասնաճյուղային ընդգրկուն ցանցի, դրա տեխնիկական հագեցվածության և սպասարկող աշխատակիցներով ապահովվածության համար անհրաժեշտ են հսկայական ֆինանսական պաշարներ, ապա ամբողջովին առցանց (առցանց) աշխատող բանկերի դեպքում նմանատիպ ծախսեր չեն կատարվում և ընդհանուր ծախսերը նվազում են, ինչի հաշվին էլ հնարավոր է իջեցնել բանկային պրոդուկտների գները (ավելի ցածր միջնորդավճարներ հաշիվներ և քարտեր բացելիս, ավելի բարձր տոկոսներ ավանդային հաշիվների վրա, ավելի ցածր տոկոսադրույքներ վարկերի տրամադրման դեպքում և այլն): Սա կհանգեցնի դրանցից օգտվողների քանակական աճին, որն էլ, իր հերթին, կնպաստի ֆինանսական ներգրավվածության ընդլայնանը: Որոշ ներբանկեր և չելլենջըր բանկեր անգամ հաշիվ և քարտ բացելիս որևէ գանձում չեն կատարում, օրինակ՝ ամերիկյան Chime-ն, որն այժմ ամսական ավելի շատ հաճախորդներ է գրանցում, քան ամերիկյան Citibank-ը: Բրիտանական չելլենջըր բանկերում ներդրված ավանդների տոկոսադրույքները մոտավորապես երկու անգամ ավելի բարձր են, քան ավանդական բանկերում [5, p. 16]: Ավանդական բանկերի փոխարեն օգտվելով ներբանկերի ծառայություններից՝ միայն 2018թ. ԱՄՆ-ում հաճախորդները մոտ 5 մլրդ դոլար են խնայել՝ մոբայլ հավելվածներով գործող խնայողական գործիքների շնորհիվ [6]:

• *Առցանց գործող բանկերը կարող են դառնալ ավելի հասանելի և հաճախորդին մոտ:* Ըստ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսական ներգրավվածության վերաբերյալ Transition Report 2016-2017-ի՝ ՀՀ-ում հասանելիությունը նվազագույն բանկային ծառայություններից օգտվելուն՝ հաշիվ ունենալուն, քաղաքային և գյուղական բնակ-

չության շրջանում բավականին տարբերվում է [7]: ՀՀ-ում բանկերի մասնաճյուղային ցանցի անհամաչափ բաշխվածության պատճառով հեշտ և արագ բանկային սպասարկվելու հնարավորություն չունեն բազմաթիվ գյուղերի բնակիչներ: Այս խնդիրը կարող են լուծել առցանց բանկային ծառայությունները, որոնցից օգտվելու համար անհրաժեշտ է միայն միացված լինել համացանցին: Ըստ Freedom on the Net 2016-ի՝ 3G ծառայությունները հասանելի են ՀՀ բնակչության գրեթե 100%-ին՝ ընդգրկելով երկրի տարածքի 90%-ը (բացառելով միայն ամայի լեռնային շրջանները) [8]:

2. Նեոբանկերի և չեյլենջըր բանկերի ազդեցությունը ֆինանսական ծառայությունների և ապրանքների օգտագործման վրա (հաշիվների, խնայողությունների, վարկերի, կատարված վճարումների քանակ և այլն):

- *Նեոբանկերի և չեյլենջըր բանկերը կարող են նպաստել առցանց վճարումների և գործարքների քանակի աճին:* Վերջիններիս նկատմամբ վստահությունը գնալով աճում է ՀՀ-ում: Ըստ Global Payment Systems Survey-ի վերջին 2016 թ. հետազոտության՝ ՀՀ-ում էական աճ է գրանցվել էլեկտրոնային հաշիվների, վճարային քարտերի, բանկոմատների, POS-տերմինալների, վճարային ծառայություններ ապահովող համակարգերի մասնաճյուղերի մասով [9]: Ըստ Global Findex database 2017-ի՝ ՀՀ-ում չափահասների 42 %-ը տարվա ընթացքում ստացել կամ կատարել է առցանց վճարումներ [10]: Եթե դիտարկենք կոնկրետ բանկի ներկայացրած տվյալներ, ապա միայն 2018 թ. Ամերիաբանկի համացանց և մոբայլ բանկինգից օգտվող հաճախորդների թիվն ավելացել է 40%-ով, իսկ գործարքները՝ 59%-ով: Թվային և ինքնասպասարկման հարթակների՝ բանկոմատների, էքսպրես բանկինգի, տերմինալների միջոցով իրականացվող գործարքների ընդհանուր քանակն ավելացել է 46%-ով: Այս գործարքները կազմում են Ամերիաբանկի գործառնությունների ընդհանուր պորտֆելի 77%-ը և ունեն աճի միտում, մինչդեռ այլ եղանակները (այցելություններ մասնաճյուղեր, բանկում ձևակերպվող գործառնություններ և հեռախոսային բանկինգ) նվազել են 4%-ով [11]: Այս ամենը վկայում է այն մասին, որ հաճախորդները պատրաստ են անցնել թվային տիրույթ և առցանց բանկերը կարող են նպաստել տարբեր բանկային պրոդուկտներից օգտվելու քանակի ավելացմանը:

3. Նեոբանկերի և չեյլենջըր բանկերի ազդեցությունը ֆինանսական ծառայությունների որակի վրա, ինչը որոշվում է սպառողների կողմից նոր ֆինանսական ծառայություններից և ապրանքներից օգուտ քաղելու ունակությամբ (կապված սպառողների իրավունքների պաշտպանության և ֆինանսական հնարավորությունների հետ) [12]:

- *Հաճախորդների բավարարվածության ցուցանիշի բարձրացում՝ ի հաշիվ առանց հերթերի, ավելի արագ, որակյալ և 24/7 սպասարկման:*

Հայաստանյան որոշ բանկերում արդեն հնարավոր է հաշիվ բացել 5 րոպեում կամ ձեռք բերել ԱՊՊԱ առցանց՝ հաշված րոպեների ընթացքում (նշենք, որ բրիտանական Revolut ներբանկում հաշիվ բացելը տևում է ընդամենը 3 րոպե) [5, p. 13]: Կրկին Ամերիաբանկի օրինակը քննարկելով՝ վերջինս առաջին անգամ Հայաստանում 2018 թ. նոյեմբերին ներդրել է սպառողական վարկերի տրամադրման առցանց համակարգ (գործում է մեքենայական ուսուցման և արհեստական բանականության ալգորիթմների հիման վրա), որը բանկի հաճախորդներին հնարավորություն է տալիս սպառողական վարկի ձևակերպումը իրականացնել առավել արագ և հարմարավետ: Սրա շնորհիվ էապես ավելացել է տրամադրված վարկերի քանակը. միայն երկու ամսում ապառիկ ֆինանսավորման ընդհանուր ծավալը աճել է 46%-ով [13]:

- *Ավելի բարենպաստ պայմանների ապահովում հաճախորդների կոնկրետ սեգմենտների համար:* Աշխարհում ներբանկերը շատ հաճախ կենտրոնանում են որևէ թիրախային սեգմենտի վրա (օրինակ՝ ՓՄՁ-ներ, ֆերմերներ, երիտասարդներ, ցածր եկամուտ ունեցողներ և այլն) և ստեղծում են ավելի լավ պայմաններ՝ ոչ միայն պարզապես բանկային ծառայություններ մատուցելով, այլ նաև տրամադրելով հարթակներ, որոնք հեշտացնում են նրանց ֆինանսական կառավարման հարցերը: Որպես այդպիսի օրինակ կարող ենք նշել հնդկական Open ներբանկը, որը բացի բանկային ստանդարտ ծառայություններից ՓՄՁ-ներին հնարավորություն է տալիս օգտվել ավտոմատացված հաշվապահական ծառայություններից՝ պարզեցնելով ֆինանսական կառավարման գործընթացը: Սրա շնորհիվ ոչ միայն երկրի ֆինանսական ներգրավվածության ընդլայնման հարցն է լուծվում (քանի որ ՓՄՁ-ների ներգրավվածությունը ֆինանսական համակարգին նույնպես հանդիսանում է երկրի ֆինանսական ներգրավվածության չափման այլընտրանքային ցուցանիշներից մեկը), այլ նաև նպաստում է երկրի զարգացմանը և խթանում տնտեսական աճը:

- *Ֆինանսական ծառայությունների տեսականու ընդլայնում և արդյունավետ լուծումների առաջարկում:* Նորագույն տեխնոլոգիաները թույլ են տալիս նոր ծառայություններ մատուցել և ներկայացնել անհատականացված առաջարկներ և զեղչեր՝ կախված հաճախորդի եկամուտներից, ծախսերից և նախասիրություններից: Եվրոպական N26 չելլենջըր բանկը, որը միայն մոբայլ հավելվածով է գործում, առաջարկում է հաճախորդներին ունենալ հատուկ Space-եր՝ ենթահաշիվներ, որոնցով հնարավոր է հեշտությամբ կազմակերպել ծախսերը և ֆինանսական նպատակները: Բրիտանական ներբանկերից Monzo-ում հնարավոր է ծախսերը դասակարգել 16 կատեգորիաներում, ռուսական Tinkoff Bank-ը ստեղծել է ֆինանսական և կենցաղային ծառայությունների գծով աշխարհում առաջին ձայնային

օգնականը՝ Օլեգ անունով, բրազիլիական SmartMEI-ն ապահովում է անվճար հարկային գործիքներ փոքր գործարարությունների համար: Ամենատարածված բրիտանական ներբանկը՝ Revolut-ը, ստեղծել է բյուջեի ամսական պլանավորման գործիքներ, առաջարկում է ունենալ խմբային հատուկ հաշիվներ (Group Vaults) համատեղ խնայողությունների համար, հնարավորություն է տալիս հաճախորդներին փոխանակել ավելի քան 90 արժույթներ լավագույն փոխարժեքներով և առանց միջնորդավճարների, ինչպես նաև բջջային հավելվածի միջոցով գնել կրիպտոակտիվներ և ոսկի (իրական ֆիզիկական ոսկի, որը Revolut-ը գնում է և պահում է գործընկերոջ միջոցով), որի համար օգտագործողները կարող են նաև ստեղծել ավտոմատ փոխանակում, հենց որ շուկայի գինը հասնի պահանջվող մակարդակին:

Այսպիսով, վերոնշյալից կարող ենք եզրահանգել, որ ֆինանսական ներգրավվածության բարձրացման տեսանկյունից կարևոր դեր կարող են խաղալ համաշխարհային ֆինանսական շուկայում նոր ձևավորվող և զարգացող ներբանկերը և չելլենջոր բանկերը. դրանք կարող են առաջարկել ավելի մատչելի ֆինանսական ծառայություններ, լինել ավելի հասանելի հաճախորդներին, ապահովել ավելի արագ և որակյալ սպասարկում, առաջարկել արդյունավետ լուծումներ և անհատականացված առաջարկներ, նպաստել ֆինանսական ծառայությունների օգտագործման աճին և տեսականու ընդլայնմանը, կենտրոնանալ թիրախային սեգմենտների վրա և այդպիսով ազդել ֆինանսական ծառայությունների եւ ապրանքների հասանելիության, դրանց օգտագործման և որակի վրա՝ բարձրացնելով երկրում ֆինանսական ներգրավվածության մակարդակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Leora Klapper, Asli Demirgüç-Kunt, Dorothe Singer, Saniya Ansar, Jake Hess**, The Global Findex Database 2017, Measuring Financial Inclusion and the Fintech Revolution, The World Bank Group, 152 pages https://globalfindex.worldbank.org/sites/globalfindex/files/2018-04/2017%20Findex%20full%20report_0.pdf

2. **Matt Burton, Matthew Risley and Laura Bock**, Falling Barriers to Entry in Fintech ...and the Toolbox Enabling Fintechs, April 2019, 15 pages <https://www.qedinvestors.com/fintech-whitepaper/#wpcf7-f1802-p1807-o1>

3. **Variant Market Research**, Global Neo and Challenger Bank Market <https://www.openpr.com/news/969866/global-neo-and-challenger-bank-market-high-rate-of-interest-than-traditional-banks-noticed-by-variant-market-research.html>

4. **Leora Klapper, Asli Demirgüç-kunt**, Measuring Financial Inclusion: Explaining Variation in Use of Financial Services across and within Countries, World Bank, 62 pages

https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/07/2013a_klapper.pdf

5. **Finnovate research**, Neo banks - performance and new ideas, United Kingdom, October 2018, 32 pages

https://irp-cdn.multiscreensite.com/91156662/files/uploaded/NeoBanks%20Performance%20and%20New%20Ideas%20Finnovate_v7_10_11_2018.pdf

6. **Ron Shevlin**, Fintech adoption in the US: the opportunity for banks and credit unions, Cornerstone Advisors, 2018, 22 pages

<https://qa-www.q2ebanking.com/wp-content/uploads/2019/01/20181107-Q2-Fintech-Adoption-Index.pdf>

7. **EBRD**, Transition report 2016-17, Financial Inclusion, 24 pages (publication date: 04-11-2016)

<https://www.ebrd.com/news/publications/transition-report/transition-report-201617.html>

8. **Freedom House**, Freedom on the net 2016, 11 pages

<https://freedomhouse.org/sites/default/files/FOTN%202016%20Armenia.pdf>

9. **The World Bank**, Universal Financial Access 2020

<https://ufa.worldbank.org/en/country-progress/armenia>

10. **Global Partnership for Financial Inclusion**, G20 Financial Inclusion Indicators, Armenia

<http://datatopics.worldbank.org/g20fidata/country/armenia>

11. **Ամերիաբանկ ՓԲԸ**, Տարեկան հաշվետվություն 2018

<https://ameriabank.am/userfiles/file/annual-report-2018-arm.pdf>

12. **The World Bank**, Financial Inclusion Strategies Reference Framework, June 2012, 60 pages

<http://documents.worldbank.org/curated/en/801151468152092070/pdf/787610WP0P144500use0only0900A9RD899.pdf>

13. **Ամերիաբանկ ՓԲԸ**, Մեկ քայլ առաջ՝ ժամանակակից տեխնոլոգիաների և ֆինանսների շուկայում, 14.01.2020 թ.

<https://www.ameriabank.am/PressContent.aspx?id=6492&subcat=226&mt=image/jpeg&lang=33>

НЕОБАНКИ И ЧЕЛЛЕНДЖЕР БАНКИ В КАЧЕСТВЕ ПРЕДПОСЫЛКИ РАСШИРЕНИЯ ФИНАНСОВОЙ ВОВЛЕЧЕННОСТИ В АРМЕНИИ

ЛУСИНЕ АМБАРДЗУМЯН

Армянский государственный экономический университет

Финансовая вовлеченность приобретает все большую важность, поскольку доказывается ее связь с повышением благосостояния общества и обеспечением экономического роста страны. В Армении за последние годы уровень финансовой вовлеченности вырос, однако больше половины населения пока не имеет счета в банке, что является одним из минимальных показателей уровня финансовой вовлеченности. В статье мы представили как новые виды банков, сформировавшихся за последнее десятилетие на мировом финансовом рынке, необанки и челленджер банки могут повысить уровень финансовой вовлеченности в РА.

Ключевые слова: Финансовая вовлеченность, банковская система, необанки, челленджер банки, онлайн-банкинг.

NEOBANKS AND CHALLENGER BANKS AS PREREQUISITES FOR EXPANSION OF FINANCIAL INCLUSION IN ARMENIA

LUSINE HAMBARDZUMYAN

Armenian State University of Economics

Financial inclusion is becoming more important, as its link with improving the welfare of the society and ensuring the country's economic growth is proven. The level of financial inclusion in Armenia has increased in recent years, but more than half of the population does not have a bank account yet, which is one of the minimum indicators of its level. The article describes how neobanks and challenger banks, the new types of banks formed over the past decade in the global financial market, can increase the level of financial inclusion in RA.

Keywords: Financial inclusion, banking system, neobanks, challenger banks, online banking

*Ներկայացվել է խմբագրություն 25.03.2020
Երաշխավորվել է տպագրության 21.04.2020*